Ասլանը դրեց պառաւի ափի մէջ մի քանի ոսկի եւ կամենում էր դուրս գալ: Բայց նա չընդունեց, ասելով.

— Դուք մի քանի անգամ այցելութիւն գործեցիք իմ հիւանդին, այդքանը բաւական է: Ես ձեզ վճարել չեմ կարող, բայց աղօթել ձեզ համար կարող եմ:

Երեւում էր, որ պառաւը աղքատութեան մէջ եւս պահպանել էր տոհմային հպարտութիւնը: Բայց Ասլանը դարձեալ աշխատում էր համոզել, որ ընդունէ ոսկիները:

— Ի՞նչու պէտք է անեմ, — պատասխանեց պառաւը փոքր-ինչ յուզուած ձայնով: — Դուք, պատուելի պարոն, կարծում էք, որ ես կարո՞ղ եմ այդ ոսկիները մէկին ցոյց տալ, կարո՞ղ եմ դրանցով մի բան գնել:

— Ինչո՞ւ չէք կարող, — հարցրեց Ասլանը զարմանալով:

— Չեմ կարող... — կրկնեց պառաւը տխուր ձայնով: — Երբ որ պարտատէրերը իմ ձեռքում փող տեսնեն, իսկոյն կը մտածեն, որ ես պանդուխտներից փող եմ ստացել, եւ բոլորը կը խլեն իմ ձեռքից: Այդ բաւական չէ, նրանք գանգատ կանէն, կը նեղացնեն ինձ, կասեն շատ ես ստացել, բեր մնացածն էլ տուր:

Ասլանը, կարծես թէ, հետաքրքրուեցաւ պառաւի տխուր խօսքերով, որոնեց մի տեղ նստելու համար, երբ ոչինչ չգտաւ, նստեց մի կողմում ընկած կոտրած սնդուկի վրայ:

— Քանի՞ պանդուխտներ ունես օտարութեան մէջ, — հարցրեց պառաւից:

— Հինգ որդի: Երկուսը Ստամբոլում չգիտեմ ի՞նչ են անում, իսկ մնացածների մասին ձայն չկայ, թէ որտեղ են: Ծերունի հայրը գնաց որոնելու կորած որդիներին, ինքն էլ կորաւ...

Պառաւի կարօտ աչքերը կրկին լցուեցան արտասուքով: Ես խիստ ցաւակցութեամբ էի լսում նրա խօսքերը եւ միեւնոյն ժամանակ յիշում էի եւ իմ կորած հորը... յիշում էի եւ իմ վշտալի մորը... յիշում էի որբ մնացած քոյրերիս... յիշում էի եւ մեր աւերակ խրճիթը... որտեղից արտաքսեց մեր վաշխառու պարտատէրը... «Ի՞նչ է այդ... — մտածում էի ես, — միթէ՞ միշտ այդպէս պէտք է մնայ հայի վիճակը... միթէ՞ նա միշտ պանդխտութեան մէջ պիտի տրորոի, մաշոի, մեռնի, արժանի չլինելով հայրենի հողին... միթէ՞ մի ճակատագրական անէծք հալածում է նրան հայրենի երկրից»... Պառաւը, իր արտասուքը սրբելով, շարունակեց.